ՆՈՐ-ԴԱՐ

№ 58 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 27 Մարտի 1903 Հինգշաբթի, 27 Մարտի ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 58

Տարեկան 10 րուբ., վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կոպ., ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., հասով 5 կ.։ Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։

Խմբագրութիւնի հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ուշ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., տեղեաների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայը վիրտկան պատարանի առաջ։ Քրոնիկոն—Լուրեր։ Մեզ գրում են.— Վլադիկաւկազից։ Խանքենդ աւանից։ Բաքի գործ։ Մամուլի շուրջը։ Թղթակցութիւններ.— Նիժ։ Ս. Էջմիածին։ Եւրոպական ասրհանգակ։ Քաղաքական.— Անգլիա։ Չինաստան։ Աւստրիա-Հունգարիա։ Ֆրանսիա։ «Նոր-Դար»-ի հեռագրներ Նամակ խմբագրութեան։ Խառն լուրեր։ Բանասիրական.— Աւրուանկարներ։ Տեղեկատու։ Յայտարարութիւններ։

ՀԱՅԸ ՎԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ*)

—

Բացի իրենից, Ի. ճաւճաւաձէից, ասը, անշուշտ, այն կարծիքին է, թէ իր այդ գրուածքը պատկանում է գիտական լուրջ գրուածների շարքին, նոյնիսկ մեր տեղական մամուլի մէջ գտնուեցին ասողներ, որ յիրաւի, այդ բրոշիւրը գիտական մի գրուածք է։ Թէ արքան ճշմարիտ ու արդարացի կարելի է համարել այդպիսի մի հայեացք,—կարծում ենք, բաւական պարզ կերպով պէտք է կարողանան ցոյց տալ հետևեալ տողերը.

Ցեսայ Նրան (<Temps»-ի Թղթակից Կոստանդինի) հրաւիրեցին Զինդիսի ինչ-որ մի վանքի անուան ծօնախմբութեան։ Այդտեղ Ֆրանսիացին կատարելապէս սրանչացած էր։ Միայն մի բան նրան սաստիկ զարմացնում էր. յայտնուեց, որ ուխտագնացութեան եկող և խրճիթներում գտնուող բոլոր կռնակը լերան չափ խոշոր քթեր ունէին...Հասկանալի բան է, Ընթրանու ապատամիա կուսակցութիւնը չէր կարող թոյլ տալ, որ այդպիսի մի քերթութիւն վերագրուէր հայերին... Ամենայն բարեմտութեամբ հանգստացրին Կոստանդինին, որ այդ մեծ քթաւոր կռնակը վրացի են։ Էհ, գրան էլ փառք Թող այն, ինչ որ իրենց համար ուխտը են համարում և անօգուտ, չեն խնայում, մեծահոգութեամբ նուիրում են մեզ... (տես 42—43)։

*) Տես «Նոր-Դար» № 57.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՐՈՒԱՆԿԱՐՆԵՐ

V.

ԲԱՐՁ

Մի քանի րոպէից կինս վերադարձաւ։ Նա չատ յուզուած էր, նա գոռում էր բոլոր մարմնովը, իսկ երեսին գոյն չէր մնացել։ Շուշանիկը նրան տեսնելուն պէս սկսեց դարձեալ լաց լինել և թաթիկները մեկնել նրան։ Ես նստեցի իսկոյն, վերցրի նրան և սկսեցի փաղաքշել։

—Մարդիկ վայրենացել են, միայ և թէ տաս, հում հում կուտեն։ Աստուած, արդեօք բնութեան մէջ կայ աւելի սոսկալի, արիւնարբու գազան քան մարդն է։

Ես համարձակուեցի ոչինչ ասել, մի րոպէ ես էլ յուսացել էի, որ վերջապէս մի պատառ ևս հաց և մի բաժակ թէյ պիտի կարողանամ խմել. այժմ վախենում էի կնոջս հետ խօսել, յանկարծ նա կարող էր ասել մի այնպիսի բան, որ աւելի լաւ էի համարում չլսել։

Բարձր նրա ձեռին էր, չպրտեց տախտի վրայ և ձեռները երկինք բարձրացնելով ասաց.

—Աստուած, դու այս քաղաքը Սոդոմ Գոմոր դարձրու։

Նրա դիմագծերը պրկուում էին ուժեղ րոպով, ձեռների և մատների ոս կորները կարծես առանձին-առանձին էին շարժուում, բարակ վերնազգեստի տակից չատ պարզ նշմարուում էր նրա կրծքի անհանգիստ ելևէջը։

—Ինչու ես այդքան յուզում քեզ, ասացի վերջապէս գոռացող ձայնով. ճակատագիր է, պիտի տանենք։ Արի, արի, վերցրու Շուշանին, դուրս գամ, տեսնեմ ինչ կարող եմ անել։

—Ոչինչ չես կարող անել, ոչինչ։

—Վերցրու Շուշանին, չես լսում, ես ուզում եմ դուրս գալ, գնալ մի քանի ծանօթների մօտ։

—Տալիս եմ բարձր, նայում է, չուռուսուռ է տալիս, հաւատում, ասում 15 կոպէկ առաջարկում։ Տասը րուբլու չափ փող է նստել ինձ վրայ այս բարձր, ամուսնանալիս իմ բաժինքումն էր դանում, չորս տարի սրա վրայ մարդուս հետ եմ քնել ու շատ բարի ու չար բաներ տեսել, և այսօր տատանելով կոպէկ են միայն առաջարկում։ Անպիտաննե՛ր, գազանն.ե՛ր... 15 կոպէկ միայն...Դուք էլ գիտէք, որ երեխաներս քաղցած են և ճարումս ճար որ լինէր, չէի ծախիլ։

Ասացէք, խնդրենք, ինչ կապ կարող է լինել պատմութեան, հնախօսութեան և հայի մեծ քթի միջև, և մեթէ գիտութեան բարձրութեան վրայ կանգնած մի մարդ թոյլ կտայ իրեն իջնել մինչև մի ժողովրդի մարմնական արատները հրապարակ հանելու փոքրոգութեան։ Այդ տողերը գիտական ոչ մի հանգամանք չունենալով, ընթերցողի մէջ զարթեցնում են խորին արհամարանք դէպի հեղինակը և նրա գրուածքը, որի մի ատուար մասը հիւսուած է մեր վերև բերածի նման «պատմական» փաստերով ու ապացուցածներով։

Այդ էլ թողնենք։

Մ՝ հայն է հետաքրքրւում իմանալու, թէ ինչ օտարազգիների հետ են տեղւում վրացի այս կամ հրապարակախօսը, մէկ կամ միւս բանաստեղծը՝ կամ գերասանը, և թէ ինչ տեսակ վկայութիւններ են տալիս դրանք օտարականին մեզ. հայերիս մասին։ Սակայն, արի տես, որ վրացի «գիտնական» հրապարակախօսի օրերն մեծ ցաւ է պատճառել վերոյիշեալ ֆրանսիացու Թիֆլիս եկած ժամանակ հայերի չքնդանում դանուելու հանգամանքը, և նա չի խնայել «գիտական» իր այդ ծանր աշխատութեան ընդամենը 120 փոքրագիր երեսներից 18 երեսը միմիայն այդ մի քանի օրուայ պատմութեանն նուիրել, որի տող ու ծուծը կարելի էր ամփոփել միջանի տող մէջ (երես 38—55)։

Ընթերցողին խորհուրդ կտայինք կարդալ այդ երեսները անձամբ ստուգելու համար, թէ որքան գիտութիւն, որքան մեծատոհմութիւն ու վեհանձնութիւն կայ արատացուած այս երեսների մէջ։

Պրոֆեսսոր Մարրի այն կարծիքը, թէ վրաց լեզուն չատ բառեր փոխ է առել հայերէնից, վիր հրապարակախօսին ամենևին դիւր չէ եկել, և նա, առաջ բերելով, բանակ—բանակի, սպիտակ—սպիտակի, ժամ—ժամի, քարտ—քաղաքի, սեռեակ—սեռնակի, կարգին—կարգի, ծէս—ծեսի, մատեան—մատեանի, պատիւ—պատիւի, ճշմարիտ—ճշմարտիի (երես 33) և ուրիշ չատ բառեր, թէև աշխատում է, իբրև օգնութեան կանչելով Էլենտմանին Բլուռնուտի վրայ և ձեռները երկինք բարձրացնելով ասաց.

—Աստուած, դու այս քաղաքը Սոդոմ Գոմոր դարձրու։

Նրա դիմագծերը պրկուում էին ուժեղ րոպով, ձեռների և մատների ոս կորները կարծես առանձին-առանձին էին շարժուում, բարակ վերնազգեստի տակից չատ պարզ նշմարուում էր նրա կրծքի անհանգիստ ելևէջը։

—Ինչու ես այդքան յուզում քեզ, ասացի վերջապէս գոռացող ձայնով. ճակատագիր է, պիտի տանենք։ Արի, արի, վերցրու Շուշանին, դուրս գամ, տեսնեմ ինչ կարող եմ անել։

—Ոչինչ չես կարող անել, ոչինչ։

—Վերցրու Շուշանին, չես լսում, ես ուզում եմ դուրս գալ, գնալ մի քանի ծանօթների մօտ։

—Տալիս եմ բարձր, նայում է, չուռուսուռ է տալիս, հաւատում, ասում 15 կոպէկ առաջարկում։ Տասը րուբլու չափ փող է նստել ինձ վրայ այս բարձր, ամուսնանալիս իմ բաժինքումն էր դանում, չորս տարի սրա վրայ մարդուս հետ եմ քնել ու շատ բարի ու չար բաներ տեսել, և այսօր տատանելով կոպէկ են միայն առաջարկում։ Անպիտաննե՛ր, գազանն.ե՛ր... 15 կոպէկ միայն...Դուք էլ գիտէք, որ երեխաներս քաղցած են և ճարումս ճար որ լինէր, չէի ծախիլ։

Նա լուեց, ծանր չունչ քաշեց և աւելացրեց.

—Դեռ այդ բաւական չէ. ամենալաւերը կերպով ինձ վիրաւորեցին էլ։

Վերջին բառերը լսելով արիւնը գլխիս տուեց։ Իսկոյն թափուց ցած թաց և կատաղած գոռացի.

—Ո՛վ էր, որ համարձակուեց քեզ վիրաւորել։

Կատաղութիւնից և յուզումից գոռում էի։

—Ես նրան կըսպանեմ, անպայման կըսպանեմ։

Վերցրի հացի դանակը, որ յանկարծ յատակի վրայ աչքովս ընկաւ, և օդի մէջ խաղացնելով բանակի կնոջս թիկունքի ուղղութեամբ, քարշ տալ կրկնելով յաճախ.

—Ո՛վ քեզ վիրաւորեց։ Ասա, ասա։

Շուշանիկը լաց էր լինում աւելի ու աւելի հառնդով, քանի ես ձայնս բարձրացնում էի։ Կինս չանում էր ձեռները ապտուտել ու երեխային գրկել, բայց ես չէի թոյլ տալիս և շարունակ կրկնում էի.

—Ասա, ասա, ով էր այն մարդը։

Նա ապտուտեց վերջապէս ձեռիցս, մօտեցաւ տախտին, վերցրեց երեխային և սկսեց թեի վրայ օրօրել, համբուրել, կրծքին սեղմել ու օրօրել դարձեալ։ Ապա գարձաւ դէպի ինձ և ասաց.

—Մեր հարեան քարտաշ Խաչին, մօտն էլ ուրիշը կար։

Քարտաշ Խաչին Զմմախու թէ Ղարադաղի պիւղից էր, մի քանի տարուց իվեր գտնում էր պանդխտութեան մէջ և լաւ վարպետ էր աշխատում, բայց ապրում էր մուրացիկի նման։ Նա պատկառած էր, ծննդավայրում կին և երեխաներ ունէր, որոնց ուղարկում էր շատ քիչ բան. նրա միակ ձգտումն այն էր, որ կարողանայ մի քանի հարիւր րուբլի ունենալ և կապարտուղ գառնալ։ Նրան առաջին րոպէից չէի համակրել և թէև մի տարուց աւելի էր, որ միևոյն բազմոմն էինք ապրում, բայց իմ բարեհամբութիւնը նրա հետ «բարի լոյս, Աստծու բարին»-ից դէնը չէր անցնում, թէև նա յաճախ բերում էր նամակներ ու մուրհակներ ինձ կրքել ու կարդալ տալիս։ Նա լաւ գիտէր մեր նեղութիւնը, ինքն էլ այդպիսի դրկանքներ էր քաշել, բայց այս օրը նա ծաղրում էր իմ թշուառութիւնը, սակայն երբ իմ օգնութեան պէտք էր ունենում, միշտ քծնելով, սողալով, փաղաքշելով էր մօտենում ինձ։ Լսելով նրա անունը, կատաղութիւնս նոսկց. ինչ որ թուլութիւն տիրեց վրաս և հարիւր կարողացայ հանել միշտ գուռը։ Քարտաշ Խաչին նստած էր թախտի վրայ իւր հայրենակից մի բանուորի հետ։ Առանց դռնից դուրս գալու գլուխս հանեցի և դիմելով նրան ասացի.

—Վարպետ Խաչ...

Նա նայեց իմ կողմս, հայրենակիցն էլ նրան հետևեց.

—Եթէ հոգիս ծախեմ քեզ ինչ կը տաս...

Ձայնս դողդողում էր. չէր կարողացայ շարունակել։ Նա ոչինչ չպատասխանեց, քիչ շփոթուեց։ Աւելի տեսիլք չտեսնէի, նոյնիսկ անպատուութիւն համարեցի ինձ համար խօսել այն մարդու հետ, որ վաղը դարձեալ մի նամակ ձեռին պիտի բերի ինձ կարդալու և պիտի խընդրի պատասխանել, զովելով ի հարկէ իմ շատ ապեղ ձիրացիրը։ Յետ քաշուեցի. տեսայ կինս նստել է թախտի վրայ. նրա գրկում երեխան քնել էր։ Մօտեցայ սեղանին, վերցրի կլիտակս և դիմելով կնոջս ասացի.

—Գնում եմ մի քանի կոպէկ ճարելու, երեխաներին մի կերպով խաթով արա, մինչև կը վերադառնամ։

—Շուտ վերադարձը, ասաց միայն։

Սենեակից դուրս եկայ։ Քաղաքում մի պահ տակ կուզ էր եկել Վահանիկը և կեդտուտ հոգը ափով վերցնում ու ածում էր բերանը։ Մօտեցայ նրան վերկացրի. նա ահագին ապտակ բարձրացրեց և ամեն ջանք գործ էր դնում, չարչարւում, տանջւում, գալարւում էր, որ կարողանայ թևերիս միջից ապատուել, բայց ես պինդ պահել էի։ Ներս տարայ սենեակ,

*) Տես «Նոր-Դար» № 57.

— Ընդհանրապես ասած, ես ուրախ եմ, որ ինձ հետ ծանոթացաք։ Ես ձեզ կարող եմ օգտակար լինել։ Ես ունեմ «Ռուսական հարստություն» ամսագրի խմբագրությունը, որի հրատարակիչն է Ռ. Ա. Ռոմանով։ Ես ինքս էլ ունեմ մի քանի գրքեր հրատարակելու։ Ես ձեզ կարող եմ ծանոթացնել Ռոմանովի հետ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(ՀԱՅԿԱԿԱՆ Վ-ՈՒԹՅՈՒՆ)

ԿԱՂԱՔԱՑԻՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Կարելի՞ է արդեօք ասել, թէ հայկական կեանքի մէջ կայ կազմակերպուած քաղաքացիութիւն։ Կարելի՞ է արդեօք ասել, թէ հայ հասարակութիւնը գիտակից է իր իրաւունքներին եւ պարտաւորութիւններին, թէ նա ունի ինքնագիտակցութիւն, որ ամէն մի քաղաքացի ունենայ իր անձնական գործերի մէջ, ինչպէս եւ հասարակական կեանքի մէջ։ Ոչ, ամենեւին չկարելի է ասել։ Մեր կեանքի մէջ ամէն ինչ կատարւում է ինքնահաճութեամբ, ամէն ինչ կատարւում է ինքնագործունէութեամբ, ամէն ինչ կատարւում է ինքնակամ կերպով։ Ամէն մի հայ ինքն իրան համարում է ազատ, ինքն իրան համարում է անկախ, ինքն իրան համարում է ինքնիշխան։ Ամէն մի հայ ինքն իրան համարում է ամէն ինչ, իսկ ուրիշ հայերը նրա համար ոչինչ են

գղջացել է այդպիսի մի նամակ գրելու վրայ. Դավիթնակը բողոքում է Գրէյֆուսի գործին բաղաքական կերպարանք արուելու դէմ։ Փորէսը յայտարարում է, որ կառավարութիւնը պէտք Պլեհոյի նամակի պարունակած մեղադրանքներին ընթացք առած լինէը նա չի արել այդ։ Ուստի մինիստրութիւնը պատասխանատու է այդ մասին քննութիւն կատարելու և արդիւնքի մասին հաղորդել պալատին։ Գործի քննութիւնը, Փորէսի ինդրի համաձայն, յետաձգուեց։

ՍՈՖԻԱ.—Կառավարութիւնը Կիւստենդիլից 250 գործ է ուղարկում հրատարակիչներին հետամուտ լինելու համար։

Կ. ՊՈԼԻՍ.—Միտրովիցի վրայ 15,000 ալբանիացիների գործած յարձակման լուրը ճիշտ չէ։ Այդ քաղաքի վրայ յարձակուող ալբանիացիների թիւն է 150-ից ոչ աւելի։ Նրանք բանակ են դրել Միտրովիցից մի քանի ժամուայ հեռաւորութեան վրայ և այդ ժամանակից ի վեր հանգիստ են պահում իրենց։

ՆԻԾՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ.—Օկան մաքրում սառոյցից։

ԲԵԼԳՐԱԴ.—Արտաքին գործերի մինիստրութիւնը յանձնում է Դեկիչին։

ՍՈՖԻԱ.—Գեներալ Պապրիկովին է յանձնուել Պլեհայի մօտ ընկած գործի յիշատակին կառուցուող մատուռի շինութեան վերահսկողութիւնը։ Ազգային ժողովը աւարտեց մաքսային ընդհանուր սակագների ծրագրի երկրորդ ընթերցումը։ Ժողովը որոշել է նախկին մինիսար Իվանչովից, որ յանձնուած է պետական խորհրդի պատասխանին, պահանջել 150,000 ֆրանկը վերադարձնել, եթէ նա չկարողանայ նոր երևան եկած գեղումների դէմ արդարանալ։

ՀՈՄՍ.—Միջազգային գիւղատնտեսական վեհաժողովը բացուած է։

ՊԱՐԻԶ.—Ժորէսը շարունակում է իւր առենախօսութիւնը, որի ժամանակ աջակցմանները չարունակ ընդհատում են ճառախօսը ցաւ է յայտնում, որ գեներալ Պելէսյի նամակը չէ յանձնուել Գրէյֆուսի գործի պաշտպանին և քննութեան է առնում կերման կայսրի նամակի մասին եղած լուրը գենդան, որի նկատմամբ լուրեր են տարածել Մերսիէն և նախնականում կուսակցութեան ժամուլը։ Վերջիններս նախազրած պատերազմը Ֆրանսիային այլ ևս չէ սպառնում, հետևաբար ներքին կարող են խօսել։ Պալատը պարտաւոր է պահանջել, որ քննութիւն նշանակուի, թէ ինչպէս կարող էր Պլեհոյի նամակի նման մի փաստաթուղթ պաշտօնի մնալ և ներկայացուել Վիլհելմ կայսրի կնոջ նամակը։ Հոհենցոլերմ երկար ծառատարում էին, աշակերտից ազգակներ բաժանուում. «Իներլին գնացէք»։ Ժորէսից յետոյ խօսեց պատերազմական մինիստրը, որը յայտարարեց, թէ աշակերտը մատիկ է նպաստել ճառախօսի խօսածների մէջ առաջ բերուած հանգամանքի նկատմամբ քննութիւն բանալուն։

ԿՈՊՆՀԱԳԷՆ.—Հրատարակուած է Վիլհելմ կայսրի Քրիստեան թագաւորին խոտած հեռագրի բնագիրը։ Մեկնումից յետոյ, կայսրը չնորհակալութիւն է յայտնում անմոռանալի գեղեցիկ օրերի համար, յառաջիկայում իրեն պէտք է համարի թագաւորական տան անդամ և շատ կոհ է թագաւորի կողմից իրեն արուած այդ պատուից։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի պ. խմբագիր!

Խնամարհաբար խնդրում ենք պատուական «Նոր-Դար»ի մօտակայ համարներից մէկում տեղ տալ մեր հետևեալ որիտոնին։

Մայմասո գաւառի Հաֆթուան գիւղում մի քանի կարող անձանց նախաձեռնութեամբ այս տարուայ յունուար ամսից կազմակերպուեցաւ «Հաֆթուանի Լսարանական Ընկերութիւն», որի նպատակն է տեղացիներին մատչելի դարձ դասախօսութիւններ կարդալ չաբաթը մէկ անգամ գիտական, գիւղատնտեսական, ուսուցչական, կենդանութեան և բարոյական գիտելիքների մասին, որոնց հետ և լինելու են զուգահեռ գործնական պարապմունքներ, ինչպէս օր. գիւղատնտեսութիւնից։

Ի նկատի առնելով՝ որ Մայմասի նման մի չատ ընկած տեղում պ. պ. դասախօսներն անկարող կլինեն գիտութեան և այլ յիշած ճիւղերի մասին հասկ վերջին տեղեկութիւնները ձեռք բերել օգտուելու նպատակով՝ «Հաֆթուանի Լսարանական Ընկերութիւնը» ներկայ դրութեամբ դիմում է բոլոր հայ և օտարազգի խմբագրութիւններին և հեղինակներին, մանաւանդ գրողներին և կարող անձանց խնդրում է չզլանալ մի-մի օրինակ իրենց օգտակար հեղինակութիւններից այս նոր կազմակերպած հասարակական հիմնարկութեան, որով մեծ բարիք սրած կլինեն՝ նպաստելով ընկերութեան տալ ժողովրդին այն՝ ինչի կարիք որ զգացում է, ինչ որ օգտակար և պիտանի է ժողովրդին։

Մեր հասցէն.—Salle de conférence arménienne de Haftvan. Perse Salmaste Haftvan.

Յ. Դ. ինդրում է հայ թերթերից արտատպել մեր այս նամակը։

Հաֆթուանի լսարանական ընկերութեան վարչութեան նախագահ՝

Ն. Թրիգորեան

քարտուղար՝ Յ. Պետրոսեան

Հաֆթուան, 11 մարտի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական չատ տէրութիւնների մէջ չարունակ փոքձեր են լինում երկաթուղու գործում չգու գօրութիւնը փոխել մի ուրիշ գօրութեամբ, գլխաւորաբար էլեքտրականութեամբ։ Իսկ Ֆրանսիայում ինքնաշարժ սյժը նախապատուում են էլեքտրականութեան։ Երկար աշխատութիւններից յետոյ պարիզեան մի գործարանի վերջապէս յաջողուեց պատրաստել երկաթուղու տրոլի մի ինքնաշարժ մեքենայ և առաջիկայ ամառուանից Պարիզի, Բիժոնի ու Մարսէլլի միջև սկսած է հատատուեն երկաթուղու ինքնաշարժ գնացքներ։ Նրանցից առաջինը պէտք է բաղկացած լինի երեք վագոններից, որոնցից իւրաքանչիւրը վերցնում է 40 ճանապարհորդ. ամեն մի վագոն ունի ծանրութիւն դնելու և հաղնուելու բաժանմունքներ։ Վագոնի առաջին մասում գետեղուած է չոգեշարժ մեքենան, որ շարժւում է կերոսինով. ստացուած ոյժը անմիջապէս հաղորդում է անիւներին։ Բաժանմունքները կառուցած հաշիւների համաձայն, Պարիզի ու Նիցցայի միջև եղած տարածութեան համար երեք վագոնին պէտք է հարկաւորուի 1000 կիլոգրամ (մօտ 22 պուդ) կերոսին և 4500 կիլոգր. (100 պուդ) ջուր։ Վագոնները արուած է գլանի չափ և այդ՝ նկատելով եղածի չափ օդի դիմադրութիւնը նուազցնելու տեսակէտ։ Այդ կարգի գնացքները պէտք է կարողանան կարել 100 կիլոմետրից ոչ պակաս (90 վերստ) մի ժամում, իսկ երբեմն—մինչև 120 կիլոմետր։ Որովհետև բերաքանչիւր վագոն իւր մօտորն ունի, ուրեմն գնացքին կարելի է ուզուած թուով վագոն կցել։ Թէ որքան գործնական է այդ ամենը—այդ ապրնի ցոյց կըտայ փորձը։

Խմբագիրը հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Բարի մարդկանց ուշադրութիւնն ենք հրաւիրում Մարիամոս Վարդանեան ազգանունով մի 60-ամեայ ծերունու ընտանիքի չքաւոր վիճակի վրայ, որը ծանրաբեռնուած է հինգ փոքրահասակ երեխաներով, որոնցից ամենամեծը 13 և ամենափոքրը 3 տարեկան է։ Այդ ընտանիքը ոչ մի չարժական և անշարժ կայք չունի. բնակարանին վճարում է ամսական 2ր.։ Այդ թշուառները կարօտ են հացի, շորի, վառելիքի։ Բարի մարդիկ կարող են իրենց օգնութիւնն ուղարկել հետևեալ հասցէին. Թիֆլիս, վնցկորդ քաղաքամաս, Կրասիլնայա փողոց, տ. Ջիշմաեանի № 145, Հրնշատպատաց եկեղեցու կրմայ։ 3—1

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սրբերէս, մորթի և վեներական ախտ ունեցող հիւանդներին։

Քիմիկօ—մկրոսկոպական կաբինէտ, որտեղ ընդունում են կոխի, խորխի, մկրի և արեան անալիզներ։

Առաւօտ 12—1 ժամը

Երեկոյեան 4—6 »

Թիֆլիս, Հերուսովկի փողոց № 41 տան Աթաբեկեանի։

(1141) 100—33

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Սկսած 1902 թ. հոկտեմբերի 15-ից (ժամերը նշանակուած են Գետերբուրգի հաշուով, փոխադրութիւն Թիֆլիսի հաշուով)

Գնացքը № 3 Բաքուից Թիֆլիս հասնում է գիշերուայ 11 ժ. 45 ր. (1 ժ. 03 ր., հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 22 ր. (7 ժ. 20 ր.), մեկնում է Թիֆլիսից—Բաքու երեկոյեան 7 ժ. 20 ր. (8 ժ. 18 ր.), հասնում է Բաքու առաւօտեան 8 ժ. 04 ր. (9 ժ. 2 ր.)։

Մարդատար գնացքը № 5 Բաքուից—Թիֆլիս մեկնում է կիրակուայ 2 ժ. 42 ր. (4 ժ. հասնում է Թիֆլիս առաւօտեան 7 ժ. 45 ր.) 8 ժ. 43 ր.) մեկնում է Թիֆլիսից—Բաքու առաւօտեան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), հասնում է Բաքու երեկոյեան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.)։

Պատասար գնացքը № 4 Բաքուից Թիֆլիս մեկնում է երեկոյեան 9 ժ. 54 ր. (10 ժ. 52 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 10 ժ. 15 ր. (11 ժ. 13 ր.) մեկնում է Թիֆլիսից—Բաքու կիրակուայ 11 ժ. 5 ր. (12 ժ 03 ր.) հասնում է Բաքու առաւօտեան 5 ժ 47 ր. (7 ժ. 05 ր.)։

Մարդատար գնացք № 6 Բաքուից Թիֆլիս մեկնում է առաւօտեան 7 ժ. 50 ր. 8 ժ. 35 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան (8 ժ.48 ր. (9 ժ. 33 ր.). Թիֆլիսից—Բաքու մեկնում է երեկոյեան 9 ժ. 11 ր. (10ժ. 09 ր.), հասնում է Բաքու կիրակուայ 1 ժ. 12. ր. (2 ժ. 2 ր.)։

Պատասար գնացքը № 70/71 Թիֆլիսից—Կարս մեկնում է երեկոյեան 10 ժ. 29 ր. (11 ժ. 27 ր.). հասնում է Սանահին 3 ժ. 30 ր (4 ժ. 28 ր.), Ղարաքիլիս—առաւօտեան 5 ժ. 49 ր. (6 ժ 47 ր.). Ալէքսանդրոպոլ—9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), Կարս—1 ժ. 06 ր. (2 ժ. 04 ր.) կիրակուայ։

Պատասար գնացքը № 72/73 Կարսից—Թիֆլիս մեկնում է երեկոյեան 5 ժ. 01 ր. 5 ժ. 59 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ 8 ժ. 10 ր. (9 ժ. 08.), Ղարաքիլիս—11 ժ. 47 ր. 12) ժ. 45 ր.), Սանահին—1 ժ. 35 ր. (2 ժ.. 33 ր.) Թիֆլիս—6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) առաւօտեան.

Ապրանքակիր-մարդատար գնացքը № 74/75 Թիֆլիսից—Ղարաքիլիս մեկնում է առաւօտեան 11ժ . 30 ր. (12 ժ. 28 ր.), հասնում է Սանահին 4. 23 ր. (5 ժ. 21ր.), Ղարաքիլիս—6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.) երեկոյեան։

Ապրանքակիր - մարդատար գնացքը № 76/77 Ալէքսանդրոպոլից-Թիֆլիս 7 ժ. 20 ր. (8 ժ. 18 ր.) Ղարաքիլիսից—Թիֆլիս մեկնում է կիրակուայ 10 ժ. 33 ր. (11 ժ. 31 ր.), հասնում է Սանահին . 0 ր(·3.1ր. . 18 ր.) Թիֆլիս 5 ժ. 15 ր(1 ժ(6 ժ12 ժ. 2երեկոյեան։

ԹԻՓԼԻՍ—ԲՈՐԺՈՄ

Մարդատար գնացքը № 7/8 Թիֆլիսից—Բորժոմ մեկնում է կիրակուայ 1 ժ. 52 ր. (2 ժ. 50ր.), հասնում է Խոր—4 ժ. 10 ր. (5 ժ 08) ր.), Միխայլովո—5 ժ. 39 ր. (6 ժ. 37 ր.. Բորժոմ—7 ժ. (7 ժ. 58 ր.) երեկոյեան.

Մարդատար գնացքը № 7/8 Բորժոմից—Թիֆլիս մեկնում է կիրակուայ 12 ժ. 50 ր. (1 ժ. 48 ր.), հասնում է Միխայլովո—2 ժ. (2 ժ. 58 ր.), Խոր—3 ժ. 43 ր. (4 ժ. 41 ր.), Թիֆլիս 6 ժ. 32 ր. (7 ժ. 30 ր.) առաւօտեան։

ՄԱՍԿՈՒԻՄ-ԹԻՓԼԻՍ

Ժամերը նշանակուած են Պետերբուրգի հաշուով, փոխադրելու համար Բաքուի հաշուով)

Մարդատար արագ գնացքը № 19 Բաքուից—Թիֆլիս մեկնում է ուրբաթ օրերը առաւօտեան 6 ժ. (7 ժ. 18 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 7 ժ. 33 ր. (8 ժ. 31 ր.)։

Մարդատար արագ գնացքը № 20 Թիֆլիսից—Բաքու մեկնում է երկուշաբթի օրերը առաւօտեան 7 ժ. 18 ր. (8 ժ. 16 ր.), հասնում է Բաքու երեկոյեան 8 ժ. (9 ժ. 18 ր.։

ԲԱԹՈՒՄ—ԲԱԼԱՋԱՐԻ

Մարդատար արագ գնացքը Թիֆլիս—Մոսկուա № 19-bis Բաքուից մեկնում է երեկոյեան 6 ժ. (6 ժ. 58 ր.) պոստատարը № 3 bis—առաւօտեան 4 ժ. 17 ր. (5 ժ. 15 ր) մարդատար № 5—bis—գիշերուայ 11 ժ. (11 ժ. 58 ր.) մարդատարը № 9—bis—կիրակուայ 12 ժ. 35 ր. (1 ժ. 33 ր.)

Մարդատար արագ գնացքը Մոսկուա—Թիֆլիս № 52—bis—հասնում է Բաքու առաւօտեան 4 ժ. 20 ր. (6 ժ. 13 ր.) պոստատար № 4—bis—9 ժ. 54 ր. (11 ժ. 52 ր.) երեկոյեան, պոստատար № 6—bis առաւօտեան 6 ժ. 32 ր. (7 ժ. 30 ր.) մարդատար № 10—bis—կիրակուայ 3 ժ. (3 ժ. 58 ր.)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացուած է բաժանորդագրութիւն

ՕՎԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Մեծ գիրքով մօտ 350 էջ

Գեղ թղթի վրայ, հեղինակի պատկերով և Փառակազմ . . . . . 10 ր.

Լաւ թղթի վրայ. . . 3 ր.

Բաժանորդագրութիւնը կըբացուի յունիսին և գրքերը կըտպուեն բաժանորդների թուով։

Թիֆլիսում դիմել—իշխանուհի Մ. Թումանեանցին (Барятин· 8) և Փ. Վարդազարեանին (Велямин. 24)

Բագու ինժեներ Մխիթար Տէր-Անդրէասեանցին (Т-во Андраникъ) և Ազամ Նազարէթեանցին (К-ра Шагиданова

(76) 10—8

ՕԳՈՍՏ ԳԱՄԱՐԱՆ—ՊՈՍՏ ԳԱՐԵՏՄ

„ՆՈՐ-ԴԱՐ“-ի Պ. ԽՄԲԱԳՐԻ

Լաւագոյն պահպանում,

Ծախսում է հասը՝ 5 կոպ. գումարով գնողներին մեծ զիջում։

Ուրիշ քաղաքներ ուղարկուում է յիսուն հատը՝ երկու րուբլի յիսուն կոպ., հարիւր հատը՝ չորս րուբլի։ Հարիւրից աւելի գնողները ճանապարհածախս չեն վճարում։ Վերադիր վճարովոչգի չէ ուղարկուում։

Օտար քաղաքներից խնդրում ենք Դիմել մեզ այս հասցէով՝ Тифлисъ, Даніелу Меликъ-Пашаянъ. Tiflis (Cau-(150) case) DanielMelik-Pachaian 10—10

ԺԱՄԱԳՈՐԾՆԵՐ և ԺԱՄԱՑՈՅՑ ՎԱՃԱՌՈՂՆԵՐ

պահանջելէք

ԻՕՍԻՖ ՌԷՅՆԻՆԻ

առևտրական տան 1903 թուի պատկերազարդ պրէյս-կուրանտները։

Варшава, Граничная. 14.

(М.) № 12362 16—9

ՄԵՆ ՕԳՈՒՏ

Մեր սիեմատոգրաֆիական գործիները (վերջին նորութիւն) ներմուծելու համար, մենք որոշում ենք ճարտարլուծմա գործակալներ փոքրիկ գրամագլխով։

Դիմել Պարիզ. Sté Générale des sinematographes et Films. Paris rue tnaeville, 33. (1134) 0—29

Բարձրպատակարկի կանայք ինչպէս և պակասկութեամբ ամենանշանաւոր գերազանուհիները հրաժարուեցին գործածել ԿՈՒԼԴ ԿՐԵՄ (Gold Creme), որ գառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նրքանք գործ են ածում

CREME SIMON

(Գրեմ-Սիմօն) գեղեցիկ հոտ ունեցող արտագրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու գէմքի գոյնի չնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։

LA POUDRE SIMON

(Պուդր Սիմօն) La savon á la Creme Simon (Օճառ Սիմօնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա գարմանալի յատկութիւնները J SIMON 59 Faubourg St.Martin Paris.

Մաս-մաս վաճառում է վարագների, պարֆիւմերների և գործագործների մօտ։

(M. 189,290) 24—16

Открыта подписка

НА

„ШЯРКЫ РУСЪ“

(*Русскій Востокъ*).

„ШЯРКЫ РУСЪ“ будетъ выходить на азрбайджанскомъ языкѣ въ Тифлисѣ съ 30-го марта 1903 г. по слѣдующей программѣ: I. Правительственныя распоряженія. II. Телеграммы «Россійскаго телеграфнаго агентства» и собственныхъ корреспондентовъ. III. Хроника мѣстной жизни и свѣдѣнія о внутренней жизни Кавказскаго края. IV. Внутреннія извѣстія и иностранное обозрѣніе. V. Экономическій и торговый отдѣлъ. VI. Фельетонъ (научно-литературный). VII. Судебный отдѣлъ. VIII. Смѣсь. IX. Справочный отдѣлъ. X. Объявленія. «Шяркы Русъ» будетъ выходить по воскресеньямъ, средамъ и пятницамъ. О выходѣ прибавленія на русскомъ и персидскомъ языкахъ будетъ объявлено

Подписная цѣна до конца 1903 г.: съ доставкой въ Тифлисѣ 5 руб.; на 6 мѣс. 4 руб., съ пересылкой иногороднымъ до конца года 6 р., на 6 м. 5 р., за границу до конца года 9 р. **подписка принимается** въ конторѣ изданія, Тифлисъ, Орбеліановская ул., № 12. Редакторъ издатель Мохаммедъ Шахтахтинскій (Ф.) 3—3.

ԲԱՑՈՒԱՆ Է ԲԱԺԱՆԵՑՐՈՒԹԻՒՆ

«ԲԱՆԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ»

Պատկերազարդ հանդիսի, որ այս տարուանից կըսկսուի հրատարակուիլ Ս Պետերբուրգում։

Հանդէսը լոյս կըտեսնի տարին երկու անգամ, ծաւալով՝ իւրաքանչիւրը գիրքը 20—25 տպ. թերթ, բովանդակութեամբ՝ հարկաւ կարելոյն չափ, ճոխ և չքեղ։

Առաջին գիրքն երևան կըգայ յունիսի վերջերին, միանգամայն անկախ բաժանորդութեան հետևանքից։

Հրատարակում ենք և խնդրում հայ հեղինակների մասնակցութիւնը։

Տպագրական թերթը կըվարձատրուի՝ ինքնուրոյն գրուածների համար 25—40 ր. թարգմանութեանց՝ 15—20 ր.։

Բաժանորդին է (3) երեք րուբլի. արտասահման՝ (10) տասը ֆրանկ։

Հանդէսս կըխմբագրի Ն. ԱՐՄՆԾ. հրատարակիչ՝ Ա. ՄԵԼԻՔԵԱՆ.

Թիֆլիսում կարելի է բաժանորդ գրուել Կեզրոնական և Գալատեանի Գուատենթերգ գրավաճառանոցներում իսկ Բագուում Պրոմեթէոս և Սամսոն Յարութիւնեանի գրավաճառանոցներում։

Մեր հասցէն Невскій просп. 55 А. Меликянъ (71) 5—1

ՄԱՄՈՒԼԻՆ Է ՅԱՆՁՆՈՒԱԾ

Շ Ի Ր Վ Ա Ն Զ Ա Դ Է Ի

ՏՊՈՒԱԾ ԵՒ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ներկայ 1903 թուականին լոյս կըտեսնեն ՀՈՐՍ ՀԱՏՈՐ,

Որոնց մէջ կըմտնեն. Յորձակատարի Թիշատակարանից, Մտնաժատար, Արաքն Դիմաթսեան, Արտաքին, Եւգինէ, Վարդան Աճրունեան, Ունէր և Իրաւունք, Օր. Լիզա, Ներլազարը, Հալածուածը, Հրդէհ, Աբտիատը, Նորերից մէկը, Թանկագին կապանք, Տատնտինգ տարի անցած, Փաթմա և Շատա, Հատատարիմ Ընկերներ և Թիշողութիւններ Բաֆֆիի և Աղաժանի մասին։

Այս չորս հատորի գինն է Թիֆլիսում տպագրների համար . . . 4 ր. 50 կ.

Օտար քաղաքներում . . . 5 ր. 50 կ.

Ուսուցիչներն, ուսանողներն և ծառայողները կարող են վճարել մաս-մաս բաժանորդ գրուելիս 2 ր., մնացեալը 2 նուագում. Առաջին և երկրորդ տոմսով ները տտանալուց յետոյ։

Մնացեալ հեղինակութիւնները լոյս կըտեսնեն 1904 թ.-ին տասնմին 4 հատորներով, որոնց համար կըբացուի առանձին բաժանորդագրութիւն։

Դիմել—Тифлисъ Центральная книжная торговля кам Тифлисъ Ширванзаде. (77) 10—6

Доз. ценз. 26-го марта 1903 г. Տպարան ընկ. «Վերելիչ և Կամնամախեր» Типографія Т-ва Вереичевъ и Каменмахеръ» Михайловск. пр., № 81 Теле. № 852